«Հաստատում եմ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ.Բաբայան
«07» 05 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Հայկ Արայի Մկրտչյանի՝ «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ս.Մնացականյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Դ.Ռ.Հունանյանի, քննարկեց Հայկ Արայի Մկրտչյանի «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ա.Մկրտչյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Անվտանգության ապահովման ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը ուղղված է ռազմական, տնտեսական, իրավական, տեղեկատվական, բնապահպանական և մշակութային անվտանգության ապահովմանը: Ընդ որում, որպես անվտանգության շահակիցներ հանդես են գալիս ինչպես պետությունն ու հասարակությունը, այնպես էլ անձը: Այլ կերպ ասած՝ անվտանգության ապահովման ոլորտում իրականացվող պետական քաղաքականության նպատակը պետք է լինի ոչ միայն հասարակական ու

պետական շահերի, այլև անձի շահերի պաշտպանությունը: Ընդ որում, ասվածը ամենևին չի նշանակում, որ անվտանգության ոլորտում հանրային շահերը կարող են հակադրվել անձի շահերին: Այդ համատեքստում արդիական է դառնում անձի անվտանգության ապահովման, որպես պետական քաղաքականության առաջնահերթ ուղղության հիմնախնդրի, և մասնավորապես դրա քրեաիրավական ասպեկտի հետազոտությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ բացահայտել անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության առկա հիմնախնդիրները և մշակել գիտականորեն հիմնավորված տեսական և կիրառական առաջարկություններ գործող քրեական օրենսդրությունը կատարելագործելու և իրավակիրառ պրակտիկան բարելավելու համար:

Հետազոտությունը սկսվում է քրեական իրավունքի տեսության մեջ անձի անվտանգության հիմնախնդրի ընդհանուր ուսումնասիրությամբ, որի շրջանակներում անձի անվտանգությունը դիտարկվում է որպես ընդհանուր իրավական հասկացություն, իսկ անձի անվտանգության ապահովումը՝ որպես քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առաջնահերթ խնդիր՝ գլոբալացման պայմաններում և դատաիրավական բարեփոխումների համատեքստում: Կատարված ուսումնասիրության արդյունքում՝ ատենախոսը հանգում է այն եզրահանգման, որ անձի անվտանգության ապահովմանն ուղղված օրենսդրական, ինստիտուցիոնալ և ընթացակարգային համակարգերի բարելավմանը էապես կարող են նպաստել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ, դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են էլեկտրոնային արդարադատության, անցումային արդարադատության համակարգերի ներդրումը, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը և այլն:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը հանգամանորեն վերլուծում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգը, որի շրջանակներում քննարկման առարկա են դառնում անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության նյութական և հոգևոր արժեքները: Կատարված ուսումնասիրության արդյունքում ատենախոսը հանգում է այն հետևության, որ որքան պաշտպանված են անձի կյանքն ու առողջությունը արտաքին ոտնձգություններից, այնքան կայուն ու բարձր է հասարակության անվտանգության

մակարդակը և կարևոր նախադրյալ է սոցիումի ու պետության բնականոն և առաջընթաց զարգացման համար: Բացի այդ, ատենախոսը եզրահանգում է, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծը և հայեցակարգը պետք է կառուցվեն անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման, որպես պետության քրեական քաղաքականության նոր, առաջատար ուղղության հայեցակարգային ուսմունքի վրա:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը վերլուծում է քրեական իրավունքում անձի անվտանգության պաշտպանության միջոցների համակարգը՝ դրանում ներառելով արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները և քրեական օրենսդրության սկզբունքները: Ատենախոսը հատուկ ուշադրություն է դարձնում դատահիրավական բարեփոխումների համատեքստում անձի անվտանգության պաշտպանության միջոցների կատարելագործման հիմնախնդրին:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է կատարված հետազոտության արդյունքները, մատնանշում ատենախոսության առավել նշանակալի դրույթները, շարադրում է հիմնական հետևություններն ու առաջարկությունները:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունը ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծ քանակության աղբյուրների օգտագործմամբ, հարուստ փորձառնական հիմքով: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևություններն ու առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Պաշտպանության ներկայացված երրորդ դրույթում ատենախոսը նշում է, որ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները աշխատանքում դիտարկվում են որպես անձի պաշտպանությանն ուղղված առաջնային սուբյեկտիվ իրավունքներ: Կարծում ենք, որ նշված պնդումը կատեգորիկ է և խմբագրման կարիք ունի: Այսպես, ատենախոսի նշված պնդումը վերաբերում է արարքի հանցավորությունը բացառող բոլոր հանգամանքներին, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ արարքի հանցավորությունը բացառող ոչ բոլոր հանգամանքները կարող են դիտարկվել որպես անձի անվտանգության պաշտպանությանն ուղղված իրավունքներ: Որպես այդպիսիք կարելի է դիտարկել արարքի հակաօրինականությունը և վտանգավորությունը բացառող հանգամանքները, ինչպիսիք են՝ անհրաժեշտ պաշտպանությունը, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը, ծայրահեղ անհրաժեշտությունը:

Սակայն մեղքը բացառող հանգամանքները, օրինակ՝ հրաման կամ կարգադրություն կատարելը որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես անձի պաշտպանությանն ուղղված իրավունք: Հատկանշական է, որ ատենախոսն ինքը աշխատանքի երրորդ գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում անդրադարձել է հենց արարքի հակաօրինականությունն ու վտանգավորությունը բացառող հանգամանքներին: Հետևաբար, ճիշտ կլիներ պաշտպանության ներկայացվող երրորդ դրույթում անել վերապահում և նշել, որ որպես անձի պաշտպանությանն ուղղված իրավունքներ կարող են դիտարկվել միայն արարքի հանցավորությունը բացառող որոշ հանգամանքներ (արարքի վտանգավորությունը և հակաօրինականությունը բացառող):

2. Ատենախոսության առաջին գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով ատենախոսը սխեմատիկ ձևով ներկայացնում է անձի անվտանգության քրեաիրավական միջոցների համակարգը, որում անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը ներկայացված են որպես ինքնապաշտպանության միջոցներ (էջ 30): Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածների առաջին մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում անձը կարող է քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառել ոչ միայն որպես ինքնապաշտպանության միջոց, այլև որպես այլ անձանց պաշտպանության միջոց: Հետևաբար, կարծում ենք, որ ատենախոսի կողմից սխեմատիկ ձևով ներկայացված՝ անձի անվտանգության ապահովման քրեաիրավական միջոցների համակարգի որոշ տարրեր ենթակա են փոփոխության այն հաշվով, որ անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը հնարավոր լինի դիտարկել ոչ միայն որպես ինքնապաշտպանության, այլև՝ որպես պաշտպանության միջոցներ:

3. Ատենախոսության երրորդ գլխի երրորդ պարագրաֆում քննարկելով **անձի անվտանգության պաշտպանության միջոցների կատարելագործման** հիմնախնդիրները դատաիրավական բարեփոխումների համատեքստում՝ ատենախոսն անդրադառնում է իրավունքի իրականացման ժամանակ վնաս պատճառելու հիմքերին և վնասի պատճառման իրավաբանական կազմին: Վերջիններիս վերլուծության ընթացքում ատենախոսը մի քանի անգամ գործածում է <<օրինական իրավունքի իրականացում>> բառակապակցությունը (էջ 118-120): Կարծում ենք, որ այդ բառակապակցության մեջ կա ներքին տրամաբանական հակասություն, քանի որ իրավունքն իր էությամբ միշտ էլ օրինական է, և ապօրինի իրավունք լինել չի կարող: Հետևաբար, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ <<օրինական իրավունքի իրականացում>> բառակապակցության փոխարեն

օգտագործել <<վնաս պատճառելու՝ օրենքով նախատեսված իրավունքի իրականացում>> բառակապակցությունը:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Հայկ Արայի Մկրտչյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնահարցերին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Հայկ Արայի Մկրտչյանի «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Մարկոսյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի 2020թ. մայիսի 6-ի նիստում, արձանագրություն № 8:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող,
ոստիկանության փոխգնդապետ Հ.Խաչատրյան

Հ.Խաչատրյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ
կադրերի և անձնակազմի գծով, ինքը և կադրերի և
անձնակազմի հետ տարվող աշխատանքների
բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյան